



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ № 29Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 19-րդ կետը և ղեկավարվելով 64-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

## ՈՐՈՇՈՒՄ Է

«ՀՀ դատական ղեկարտամենտ» ՊԿՀ-ի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով ՀՀ դատարանների պահուստային ֆոնդից «ՀՀ դատական ղեկարտամենտ» ՊԿՀ-ի կենտրոնական մարմնին հատկացնել **23 694 000 (քսաներեք միլիոն վեց հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ, որից՝**

1. «ՀՀ դատական ղեկարտամենտ» ՊԿՀ-ի կողմից ԱԶ Ջավեն Սերյոժայի Եղիազարյանից թվով 20 խոսափող ձեռք բերելու նպատակով՝ **813 000 (ութ հարյուր տասներեք հազար) ՀՀ դրամ՝** բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Վարչական սարքավորումներ» 512200 հոդվածով.

2. «ՀՀ դատական ղեկարտամենտ» ՊԿՀ-ի կողմից «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ից փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհանդակային կապի և օժանդակ ծառայություններ ձեռք բերելու նպատակով՝ **20 000 000 (քսան միլիոն) ՀՀ դրամ՝** բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապի ծառայություններ» 421400 հոդվածով.

3. «ՀՀ դատական ղեկարտամենտ» ՊԿՀ-ի կողմից «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ից փորձնական (պիլոտային) ծրագրով ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ մատուցելու նպատակով՝ **2 600 000 (երկու միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ՝** բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Համակարգչային ծառայություններ» 423200 հոդվածով.

4. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից «Մեզնա» ՍՊԸ-ից ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ մատուցելու նպատակով՝ 281 000 (երկու հարյուր ութսունմեկ հազար) ՀՀ դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» 425200 հոդվածով:

Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահ

2017թ. դեկտեմբերի 20  
ք. Երևան

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ